



Արևմտահայկան

Հայոց



Հայաստանի

Համազումար

Ջավախքի Հայերի Ազգային Խորհուրդի Պաշտոնական Հռչակագիրը՝

Ախալցխա, 2009թ, փետրվարի 28

Նկատի ունենալով՝

ա/ Բնիկ ժողովուրդների, այդ թվում Ջավախքի հայ բնակչության իրավունքների անտեսումը Վրաստանի կողմից,

բ/ Մայրենի լեզվի, ազգային մշակույթի ու արվեստի, պատմական հուշարձանների պահպանման հիմնախնդիրները,

գ/ Պաշտոնական Երևանի վարած ներկա քաղաքականությունը Ջավախքի հայության հանդեպ,

դ/ Ջավախքի հայ բնակչության սոցիալ-տնտեսական և քաղաքական հիմնախնդիրները,

ե/ Ջավախքի հայության ֆիզիկական անվտանգության խնդիրը.

Հաստատելով, որ Ջավախքի հայերն արժանիքներով և իրավունքներով հավասար են մյուս բոլոր ժողովուրդներին, ընդունելով բոլոր ժողովուրդների տարբեր լինելու և իրենց տարբեր կերպ ինքնագնահատելու իրավունքը և որպես այդպիսին հարգված լինելը,

Հաստատելով նաև, որ բոլոր ժողովուրդներն էլ նպաստում են քաղաքակրթության ու մշակույթի հարստացմանը և բազմազանությանը, որոնք համայն մարդկության հարստությունն են կազմում,

Հաստատելով նաև, որ բոլոր տեսությունները՝ քաղաքական և գործնական, որոնք դիմում կամ գովաբանում են ժողովուրդների կամ անհատների առավելությունը, հենվելով ազգային, ռասայական, կրոնական, էթնիկ կամ մշակութային տարածայնությունների վրա, ռասսիստական են, գիտականորեն սխալ, իրավաբանորեն անարժեք, բարոյապես դատապարտման արժանի և հասարակայնորեն անարդարացի,

Վերահաստատելով, որ Ջավախքի հայերն իրենց իրավունքներն իրականացնելիս չպետք է խտրականության առարկա հանդիսանան,

Մտահոգված այն փաստով, որ Ջավախքի հայերը զրկվել են իրենց մարդկային իրավունքներից և իրենց հիմնական ազատությունից, մյուս հետևանքների հետ նաև բնական պաշարներից, որը նրանց խանգարել է կատարելագործել իրենց զարգացման իրավունքը՝ ըստ իրենց սեփական պահանջմունքների և հետաքրքրությունների,

Ընդունելով Ջավախքի հայերի իրավունքներին բնորոշ առանձնահատկությունների ճանաչման անհրաժեշտությունը, մասնավորապես նրանց հողերի, տարածքների, բնական պաշարների իրավունքները, որը բխում է իրենց քաղաքական, տնտեսական և սոցիալական

կառուցվածքներից ու մշակույթից, հոգևոր ավանդույթներից, պատմությունից և փիլիսոփայությունից,

Բավարարվելով այն փաստով, որ Ջավախքի հայերը կազմակերպվում են բարելավելու իրենց կարգավիճակը քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքում և վերջ դնելու ամեն տեսակ խտրականություններին և ճնշումներին,

Համոզված, որ Ջավախքի հայերի կողմից իրենց հողերի, տարածքների, բնական պաշարների վերաբերյալ հսկողությունը թույլ կտա ամրապնդելու իրենց հաստատությունները, իրենց մշակույթն ու ավանդույթները, և առաջ քաշելու իրենց զարգացումն՝ ըստ իրենց ներշնչանքների և պահանջմունքների, գիտելիքների, կրոնական, ավանդական արարողությունների և մշակույթների,

Ընդունելով նաև գիտելիքների, ծիսական արարողությունների և մշակութային արժեքների հանդեպ հարգալից վերաբերմունքը՝ նպաստում են շրջապատի տնական և արդարացի արժևորմանն ու նրա ճիշտ կառավարմանը,

Ընդգծելով Ջավախքի տարածքները ապառազականացնելու անհրաժեշտությունը և այդպիսով նպաստելու խաղաղությանը, առաջընթացին և սոցիալ-տնտեսական զարգացմանը, ազգերի և ժողովուրդների միջև ըմբռնողականությանը և բարեկամական հարաբերություններին,

Ընդունելով, մասնավորապես, ընտանիքների և հասարակության պատասխանատվություն կրելու իրավունքը, դաստիարակության, ուսուցման, կրթության և իրենց երեխաների բարեկեցության հարցերում,

Ընդունելով նաև, որ Ջավախքի հայերն իրավունք ունեն ազատորեն սահմանելու իրենց փոխհարաբերությունները հարևանների հետ՝ համագոյության ոգով, փոխադարձ հետաքրքրությամբ և մեծ հարգանքով,

Նկատի ունենալով, որ Ջավախքի հայության իրավունքներն ու ազատությունները միջազգային կառույցների մտահոգության թեմա է,

Ընդունելով, որ Միավորված Ազգերի կանոնադրությունը և միջազգային համաձայնագիրը՝ կապված սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների հետ, և միջազգային համաձայնագիրը՝ կապված քաղաքական և քաղաքացիական իրավունքների հետ, հաստատում են բոլոր ժողովուրդների գլխավոր՝ անկախ լինելու իրավունքի կարևորությունը, իրավունք՝ որի շնորհիվ նրանք ազատորեն որոշում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն հաստատում իրենց մշակութային և սոցիալ- տնտեսական զարգացումը,

Նկատի ունենալով, որ տվյալ Հռչակագրի ոչ մի դրույթ չի կարող պատճառ հանդիսանալ ժխտելու մի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, ինչպիսին էլ որ այն լինի,

Կոչ անելով պետություններին՝ խորհրդակցելու և համագործակցելու շահագրգիռ ժողովուրդների հետ, հարգելու և գործի դնելու միջազգային բոլոր միջոցները՝ մասնավորապես, կապված մարդու իրավունքների հետ, որ կիրառելի են Ջավախքի հայերի համար,

Ընդգծելով, որ ՄԱԿ-ը կարևոր դեր ունի և շարունակում է ունենալ Ջավախքի հայերի իրավունքների առաջ քաշման և պաշտպանման հարցում,

Համոզված, որ տվյալ Հոչակագիրը մի նոր կարևոր շրջան է Ջավախքի հայերի ազատության ու իրավունքների ճանաչման, առաջաջման և պաշտպանման ճանապարհին ու այս ոլորտում Միավորված Ազգերի կազմակերպության մարմինների համապատասխան գործունեությունների զարգացման գործում.

Մենք պաշտոնապես հայտարարում ենք՝

ա/ Արևմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի հովանու ներքո Ջավախքի Ազգային Խորհրդի կազմավորումը,

բ/ Ջավախքի հայերը միակն են, որ իրավասու են իրենց իրավունքների արժևորմանը,

գ/ Ջավախք անվանումը ընդգրկում է պատմական Մեսիք-Ջավախք-Թոեղքի տարածքները,

դ/ Հիմնվելով մարդու իրավունքների հոչակագրի համընդհանուր սկզբունքներին և առհասարակ միջազգային իրավունքով ընդունված չափանիշներին,

ե/Բնիկ ժողովուրդների իրավունքների վերաբերյալ Միավորված Ազգերի Հոչակագիրը կիրառելով,

զ/ Ջավախքի Հայերի Ազգային Խորհուրդը հանձն է առնում ձևավորել Ջավախքի հայության սոցիալ-տնտեսական և քաղաքական անվտանգության երաշխիք հանդիսացող համակարգ:

Ջավախքի Հայերի Ազգային Խորհուրդ

e-mail : javakhqkhorurd@mail.ru